

սպառիր. ոչ թէ միայն չեն սպառիր, այլ որքան ծախուին՝ այնքան կ'ընդարձակուին: Ի՞նչպէս. մի հարցունէր, վասնզի պատասխանը գողութիւն է, եւ այս գողերն մեծ յարգ ու պատիւ կը վայելեն հասարակութեան մէջ՝ որ կ'ըսէ անոնց համար.

—Շատ խելացի, շատ ճարպիկ մարդեր են. կանխաւ պատրաստած են իրենց ապագայն:

Եթէ ասոնք ուրիշ հողի մը վրայ գտնուէին՝ ցմահ բանտարկութեան կդատապարտուէին:

Դաս մ'ալ կայ, որ ո՛չ գործ ունի եւ ո՛չ եկամուտ եւ ո՛չ ալ հոգ ապրելու համար: Այս մասին վրայ եթէ ականարկ մը ընես՝ կգարմանաս, թէ ի՛նչպէս կապրի եւ ինչո՛ւ անօթութենէ չմեռնիր. բայց երբ իր ընթացքը քիչ մը քննես՝ կգարմանաս, թէ ինչո՛ւ միլիոնի տէր չըլլար: Այս մասին բոլոր դրամագլուխն է իւր կրած հագուստն, գոր կշինէ՝ բարեկամներէ նախ փոխ առնելով եւ յետոյ չվճարելով: Բոլոր հարստութիւնն իւր վրայ կը կրէ, Պիասի աշակերտներէն է: Այդ հագուստին տէր ըլլալուն պէս՝ բարեկամէ մը քանի մը դահեկան կգտնէ եւ կ'երթայ թաղին ամենէն նշանաւոր սրճարանին մէջ կնստի: Աչերը կյառէ սրճարանին դրանը, ուսկից անձանօթի մը մտնելուն կսպասէ ճիշդ այն ձկնորսին պէս, որ կարթը կձգէ ջուրին մէջ եւ ձուկի մը գալուն կսպասէ: Օտարական մը մտաւ՝ անոր հետ իսկոյն բարեկամ կ'ըլլայ, քովը կ'երթայ եւ կը սկսի խօսակցութեան.

—Ե՞րբ եկաք, կը հարցնէ անոր:

—Երեկ գիշեր եկայ:

—Ես զձեզ տեղ մը տեսած եմ, զձեզ պիտի ճանաչեմ... բայց յիշողութիւնս քիչ մը տկար է ու...

—Կարելի է:

—Մարտիրոս աղային քեռորդի՞ն էք դուք:

—Ո՞ր Մարտիրոս աղային:

—Մարտիրոս աղա մը կար... սա ինքը... սա Մարտիրոս աղան, որ վերջը ... վերջը բան մը եղաւ:

—Վերջաբա՞ն մի եղաւ...

—Վերջաբան մը եղաւ, ըսին այն ատենները:

—Մարտիրոս անունով մօրեղբայր չունիմ ես:

—Չունի՞ք մի:

—Չունիմ: